ՈՐՈՇՈՒՄ 10

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ԽՈՐՀՐԴԻ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին

ք. Երևան 30 ապրիլի 2009թ.

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 216-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհուրդը որոշեց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2008 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2009 թվականի հունիսի 5-ին ժամը 1300-ին:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերի ցուցակը կազմելու օր սահմանել 2009 թվականի ապրիլի 30-ը:

3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և շահույթի բաշխման հաշվետվությունը (կցվում է):

4. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը (կցվում է):

5. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:

6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը (կցվում է):

7. Սահմանել, որ սույն որոշման 5-րդ կետով հաստատված ցուցակում ընդգրկված նյութերին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերը կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության վարչական շենքում (ք. Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև բանկի պաշտոնական կայքում (www.araratbank.am):

8. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը (կցվում են):

9. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2008 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել ք.Երևան, Ամիրյան 1 հասցեում՝ Արմենիա Մարիոթ հյուրանոց, դահլիճ Տիգրան Մեծ:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի ապրիլի 30-ից:

Խորհրդի նախագահ՝ Բ. Բեգլարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2008 թվականի գործունեության հաշվետվության հաստատումը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և շահույթի բաշխման հաստատումը:

Նախագիծ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2008 թվականի շահույթի բաշխումը.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն 2008 թվականի հաշվեկշռային շահույթը կազմել է 589 201 974 (հինգ հարյուր ութսունինը միլիոն երկու հարյուր մեկ հազար ինը հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի շահույթն առաջարկվում է բաշխել հետևյալ տեսքով.

- 30.000.000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամն ուղղել պահուստային հիմնադրամի համալրմանը:
- շահույթի մնացած մասը որպես չբաշխված շահույթ թողնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի տրամադրության տակ: